ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/279

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16194-2021 գրությամբ «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 28.09.2021թ. թիվ 01/61-23149 գրության հիման վրա, 05.10.2021թ. թիվ 26/26-1/16194-2021 գրությամբ նախաձեռնել է «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/279 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.09.2021թ. թիվ 01/61-23149 գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև 14.01.2021թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 16.09.2021 թվականին մուտքագրված համապատասխան գրությամբ ընկերությունը տեղեկացրել է, որ պայմանագրով սահմանված պայմաններով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը ընկերությունը չի կարող մատակարարել և խնդրել է լուծարել պայմանագիրը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով ընկերության գրությունը՝ վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի պայմանագրի մնացորդային քանակի մասով

հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2251570 ՀՀ դրամ գումարի չափով լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/279 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/279 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/279 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև 14.01.2021թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև 10.02.2021թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որով հաստատվել է վճարման ժամանակացույցը:

3. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 2180 կգ «Բայխաթեյ սև, Չայնի Դրակոն» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 2021թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

4. «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 15.09.2021թ. գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«2021թ. հունվարի 14-ին Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով պայմանագրի շրջանակում N 1 հավելվածով

սահմանված պայմաններով ապրանքները ՍՊԸ-ն այլևս չի կարող մատակարարել: Խնդրում ենք միակողմանի լուծել պայմանագիրը»:

5. Պատվիրատուն «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին ուղղված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին 27.09.2021թ. թիվ 01/61-23017 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև 14.01.2021թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 16.09.2021 թվականին մուտքագրված համապատասխան գրությամբ ընկերությունը տեղեկացրել է, որ պայմանագրով սահմանված պայմաններով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը ընկերությունը չի կարող մատակարարել և խնդրել է լուծարել պայմանագիրը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով ընկերության գրությունը՝ վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի պայմանագրի մնացորդային քանակի մասով հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2251570 ՀՀ դրամ գումարի չափով լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը

միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16194-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 28.09.2021թ. թիվ 01/61-23149 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա

մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև 14.01.2021թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 2180 կգ «Բայխաթեյ սև, Չայնի Դրակոն» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 2021թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

«ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 15.09.2021թ. գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«***2021թ. հունվարի 14-ին Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով պայմանագրի շրջանակում N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապրանքները ՍՊԸ-ն այլևս չի կարող մատակարարել: Խնդրում ենք միակողմանի լուծել պայմանագիրը***»:

Պատվիրատուն «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին ուղղված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին 27.09.2021թ. թիվ 01/61-23017 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև 14.01.2021թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով,

ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 16.09.2021 թվականին մուտքագրված համապատասխան գրությամբ ընկերությունը տեղեկացրել է, որ պայմանագրով սահմանված պայմաններով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը ընկերությունը չի կարող մատակարարել և խնդրել է լուծարել պայմանագիրը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով ընկերության գրությունը՝ վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի պայմանագրի մնացորդային քանակի մասով հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2251570 ՀՀ դրամ գումարի չափով լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 14.01.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ Պատվիրատուին ուղղված 15.09.2021թ. գրությամբ մասնավորապես հայտնել է, որ 2021թ. հունվարի 14-ին Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով պայմանագրի շրջանակում N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապրանքները ՍՊԸ-ն այլևս չի կարող մատակարարել և խնդրել է միակողմանի լուծել պայմանագիրը, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16194-2021 գրությամբ «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**